ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԹԻՎ 3

2023 թվականի հունվարի 20-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 6-րդ ^{բ} դասարանի ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին 28 ծնողներ:

Ժողովը վարում էր դասղեկ Գոհար Ղազարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում և 2-րդ կիսամյակի անելիքները:
2. Ընթացիկ հարցեր :

1. Լսեցին.- 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում և 2-րդ կիսամյակի անելիքները:

Ելույթ ունեցավ դասղեկ Գոհար Ղազարյանը: Նա ամփոփ ներկայացրեց 6-րդ ^{բ} դասարանի 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի արդյունքները:

Դասարանում սովորող 32 աշակերտներից 31-ը գնահատվել են բոլոր առարկաներից, իսկ Նաիրի Մաթևոսյանը չի գնահատվել ֆիզկուլտուրայից: Դասարանի աշակերտների առաջադիմությունը 1-ին կիսամյակում 87 % է, որակական ցուցանիշը՝ 19 %: Կան գերազանց գնահատականներ ունեցող 3 աշակերտներ: Հարվածային են նույպես 3 աշակերտներ.

Գերազանցիկներ

1. Հովհաննիսյան Էլինար
2. Միքայելյան Էրիկ
3. Քոչարյան Սիմոն

Հարվածայիններ

Ա. Գալստյան Գոռ
Բ. Պետրոսյան Ալինա
Գ. Տիգրանյան Դավիթ

Աշակերտների բացակայությունը կազմում է 513 ժամ: Բոլոր բացակայությունները հարգելի են, որովհետև դասի չեն եկել հիվանդության կամ սպորտային մրցաշարերի մասնակցելու պատճառով, կամ էլ մեկնել են արտերկիր՝ տարբեր մարզաձևերից անցկացվող մրցումների մասնակցելու համար:

Կիսամյակի ընթացքում դասղեկը, ավագները և աշակերտական խորհրդի անդամները հետևողական են եղել դասարանի հերթապահության, աշակերտների հաճախումների, դասագրքերի, օրագրերի և աշխատանքային տետրերի վիճակի ստուգման, համազգեստի, ինչպես նաև դասարանի սանիտարական վիճակի ու գույքի պահպանման հարցում: Պատժվել են նրանք, ովքեր կատարել են կարգապահական շեղումներ:

Դասարանի 32 աշակերտներից 25-ը մասնակցում են արտադասարանական և արտադպրոցական տարբեր խմբակների (գրականության, երաժշտական, պարի, կերպարվեստի, շախմատի, Armat-ի և սպորտային տարբեր մարզաձևերի) պարապմունքների ինչպես գյուղում՝ դպրոցում, երաժշտական դպրոցում, կուլտուրայի տանը, այնպես էլ Երևանում, Աբովյանում, Զորաղբյուրում, որոնք նպաստում են նրանց գիտելիքների հարստացմանը և կարողությունների ու հմտությունների բացահայտմանը:

Ծնողներին հիշեցվեց, որ 1-ի կիսամյակում 4 աշակերտ 1-2 -3 առարկաներից ունեն «3» «անբավարար» գնահատականներ: Նրանք պետք է անպայման լավ սովորեն, որպեսզի 2-րդ կիսամյակի ավարտին ունենան դրական առաջընթաց, այլապես կնշանակվի աշնանային վերաքննություն:

Դասարանում 5-6 լավ սովորող աշակերտներ էլ 1 կամ 2 առարկաներից ունեն ցածր գնահատականներ՝ «5»-եր և «6»-եր, որոնց պատճառով հարվածային չեն: Սրանք նույնպես պետք է ձգտեն բարձրացնել իրենց գնահատականները, որովհետև ունեն և՛ կարողություն, և՛ ժամանակ ու հնարավորություն:

Երկրորդ կիսամյակի արդյունքներից կախված կլինեն նաև դասարանի տարեկան առաջադիմության արդյունքները և ընդհանուր որակական ցուցանիշը:

Զեկուցողը նշեց նաև միջին գնահատականներով սովորող աշակերտների անունները, որոնք ի վիճակի են բարձր մակարդակ ապահովել, սակայն չունեն ձգտում, որի պատճառով էլ թուլացել է նրանց վարքը:

Խոսվեց նաև ավագների կատարած հետևողական աշխատանքի մասին, որի շնորհիվ դասարանը միշտ մաքուր վիճակում է, հսկվում են դասամիջոցներին բոլոր աշակերտների կարգապահությունը, դասերին նախապատրաստվելը, միմյանց օգնելը, և ոչ մի աշակերտ չի խուսափում հերթապահություն անելուց:

Դասղեկն անդրադարձավ դասարանի ծնողական ու աշակերտական խորհուրդների աշխատանքին, որոնք համագործակցել են դասղեկի և տնօրենուհության հետ, ու այդ գործը շարունակվում է արդյունավետ ձևով:

Որոշեցին.

- Օգնել ուսման մեջ թերացող և «անբավար» գնահատական ունեցողներին՝ լավ

սովորելու և բարձրացնելու իրենց մակարդակը:

- Ամենօրյա դասահարցումների միջոցով ստուգել բոլոր աշակերտների դասին

պատրաստ լինելը:

- Ուժեղացնել դասարանի աշակերտների նկատմամբ հսկողությունը սովորե-

լու հարցում ծնողների կողմից և ամեն գործում օգնել դասղեկին:

- Ավելի հաճախ լինել դպրոցում, կատարել դասալսումներ՝ աշակերտների

կարգապահությունը և վարքը բարձր մակարդակի վրա դնելու նպատակով:

- Գնահատել դասղեկի և բոլոր ուսուցիչների կատարած աշխատանքը դասարանում առաջադիմություն ապահովելու հարցում:

2. Լսեցին. - Ընթացիկ հարցեր:

Ծնողական խորհրդի անդամները խոսեցին տղաների լրջանալու, կազմակերպված ու միասնական լինելու, տղա-աղջիկ սերտ համագործակցության, կարգապահության ու վարքի մասին և նշեցին, որ դասարանի 21 տղաներ վաղվա մեր զինվորներն են ու ծառայելու են հայոց բանակում: Այսօրվանից պիտի նրանց մեջ արմատավորվի հարգանք միմյանց ու աղջիկների նկատմամբ, հայրենասիրություն, ինքնուրույն դատողություններ անելու կարողություն, միասնականություն, հանդուրժողականություն ու վարքագծում բնավորության դրական գծերի դրսևորում, որպեսզի նրանք զգան իրենց դերն ու անելիքները ապագայում, լինեն պատրաստ և օրինակելի ամեն տեղ:

Որքան բարձր լինի նրանց մակարդակը, համախմբվածությունն ու կազմակերպվածությունը, այնքան հեշտ կլինի զինվորական ծառայությունը, կյանքում կայանալն ու կիրթ քաղաքացի դառնալը, որովհետև զինվորի ու իսկական մարդու առաջին քայլն սկսվում է դպրոցից: Ուրեմն՝ աշակերտը դպրոցից մարդ ձևավորված պիտի դուրս գա. դա է պահանջում ժամանակը:

Նելլի Քոչարյանը հորդորեց բոլոր տղաներին օրինակ ծառայել դասարանի աղջիկների համար իրենց վարքով և առաջադիմությամբ:

Սաթենիկ Ազիզյանը և Անի Բաղալյանն էլ խորհուրդ տվեցին լավ սովորողներին՝ օգնել ուսման մեջ չառաջադիմող իրենց ընկերներին:

Արփինե Սիմոնյանն առաջարկեց ուժեղացնել դասարանում կատարվող բոլոր աշխատանքների հսկողությունը ծնողների կողմից և ամեն հարցում հենարան լինել դասղեկին:

Մի քանի ծնողներ էլ առաջարկեցին դասարանում ավելի շատ միջոցառումներ կազմակերպել, որովհետև դրանով աշակերտներն իրար ավելի լավ են ճանաչում և կապվում իրար հետ:

Քննարկվեցին նաև ընթացիկ հարցեր՝ կապված աշակերտների կուլտուրական մակարդակի բարձրացման, գիտելիքների զարգացման և այլ խնդիրների լուծման հետ (կոլեկտիվ կինոդիտում, այցելություն թանգարաններ ու թատրոններ, ներդպրոցական միջոցառումներ և այլն):

Բոլորն էլ հավաստեցին, որ սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում մեծ է ծնողների դերը երեխային ուսման մեջ աջակցելու և դպրոցից դուրս նրա օրվա մնացած ժամերի զբաղվածությունը ճիշտ կազմակերպելու հարցում, որովհետև նրանց ամենօրյա անմիջական հսկողությունից և ծնողական պարտքի զգացումից է կախված աշակերտի ուսման նկատմամբ պատասխանատվությունը, օրվա ռեժիմի ճիշտ կարգավորելը: Ուսուցիչն ու ծնողը պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության և ուսման հիմնախնդիրների լուծման հարցում:

Այս տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքում ավելի շատ հայրերը պետք է հետաքրքրվեն ու զբաղվեն: Բացի դասապատրաստումից պետք է հետե-

վել, որ երեխան կատարի լրացուցիչ հանձնարարություններ, զբաղվի հանրօգուտ աշխատանքով, գիրք կարդա և ժամանակ գտնի՝ օգնելու ծնողին տնային գործերում, որովհետև ծնողի օրինակն է երեխայի համար դառնում չափանիշ:

Դասղեկը հորդորեց ծնողներին՝ ճիշտ կազմակերպել երեխաների և՛ ազատ ժամանակի տնօրինումը, և՛ դասապատրաստման գործը. չէ՞ որ այդ ամբողջ ժամանակահատվածում նրանք գտնվում են ծնողների հսկողության տակ:

Կարևոր է նաև երեխաների հաճախակի այցելությունը մշակութային օջախներ՝ կրթական մակարդակը բարձրացնելու և նոր մարդ ձևավորելու ընթացքը ճիշտ հիմքերի վրա դնելու համար:

Որոշեցին.

- Հաճախակի լինել դպրոցում, կատարել դասալսումներ, հետևել և օգնել աշակերտներին ամեն հարցում:
- Ստուգել երեխայի ամենօրյա դասապատրաստումները (տնային և գործնական աշխատանքների կատարում, օրագրի լրացում և այլն):
- Ժամանակին կարգավորել բոլոր աշակերտների անձնական փաստաթղթերը՝ համապատասխան տեղեր ներկայացնելու համար:

Ժողովի նախագահ՝ (Քրիստինե Հովհաննիսյան)

Քարտուղար՝ (Արմինե Կարապետյան)